

բերին ամբողջ խաչի ճանապարհը. ճամբան քարոտ էր:

Արարողութիւնը աւարտեցաւ սուրբ գերեզմանին առջեւ, որ ժայռերու մէջ փորուած էր, ստեղծելով բնականութիւնը՝ իրականին: Արդէն կէսօր էր:

«Բոպէից արեգականն — կը լսուէր տալաւին Շնորհալիին երգը խորիմաստ — գոյնի արար գիշերանման. գտուերն ֆող արկ մերկութեան՝ զի մի՛ տեսցէ ակն անարժան: Ի մէջօրեայն նսեմացաւ, յորժամ Ադամ մեղօք մեռաւ. ի յիններորդն ի լոյս դարձաւ, յորժամ մահուամբ մահն լուծաւ»:

Լոյսն էր ծագեր ամէնուս արտին մէջ. խաչին լոյսը, Աստուածամօ՛ր լոյսը. հաւատքի այն լոյսը՝ որ պանդուխտ հայութեան հօր ժառանգութիւնն է, հայրենիքէն բերած հետը: Ու վստահ ենք թէ աստուածային այդ լոյսը պիտի ծաւալի բոլոր հայութեան սրտին մէջ, մինչեւ Արարատի ստորոտը, վեհապանծ Մասիսներու հովանին տակ ապրող ամէն մէկ հայորդիի մէջ, ու պիտի միացնէ աշխարհի չորս կողմը հողմացրիւ մեր բեկորները, պիտի թեթեւցնէ ամէնուս վիշտը, պիտի ըլլայ բախտան աւ կազդոյր եւ հօր առաջնորդ. հուսկ պիտի զօղէ զամէնքը սիրոյ եւ եղբայրութեան դրօշին տակ՝ Հայաստանի Տիրամօր քաղցր հովանիին տակ, սուրբ հաւատքի կատարեալ միութեան մէջ:

Կէսօրէն վերջ, բոլոր ուխտաւորներս դարձեալ վր մասնակցէինք Ս. Հազորդութեան թափօրին: Այս անգամ հրաշալի արեւ մը կը վայլէինք. եւ թափօրը իր ամբողջ չրեղութեամբ կը յառաջանար:

Պատեհ ժամ մը գտնելով՝ կ'այցելենք նաեւ Լուրտի ամէնէն հին շէնքերէն մէկը. ցածրիկ տնակ մը, ուր տակաւին կը պահ-

ուին Սուրբիւրու ընտանիքին դործածած իրեղէնները. պարզ ու աղքատին ամէն ինչ, ուր կարծես դեռ զգալի է շունչը խոնարհ Պերնատէթին, որ արժանի եղաւ երկնային անճառ տեսիլքներու. եւ ապա՝ անոնց ստուգութիւնը խոստովանելու համար, ի՞նչքան հալածանքներ ու վշտեր կրեց, եւ հուսկ... վաղ մը առանձնացաւ, հեռու աշխարհէն ու փառքէն, մենութեան մէջ Աստուծոյ նուիրելու իր կուսութիւնն ու աղօթքը: Հիմա ամբողջ աշխարհ երանի կու տայ իրեն. մինչ ինք երկնքի փառքերուն մէջէն կ'երգէ յաւէտ. «Մեծացուցէ անձն իմ զՏէր... զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ՝ ահա յայտնեալ է երանեսցեն ինձ ամենայն ազգք»: Հետզհետէ ետեւէդ մտնող նորեկ ուխտաւորներ չեն թողուր որ դանդաղիս, սուղուիս խորհրդածութիւններու մէջ. հարկ է դուն ալ յիշատակի սրբազան առարկաներ միայն հետդ առնելով՝ դոհանաս, եւ ջերմ համբոյրով մը այդ սուրբ պատերուն՝ հեռանաս... ու վաղես դէպի սուրբ աղբիւր, հրաշագործ ջուրով վերջին անգամ մ'ալ լեցնելու ուխտաւորի սրտակղ շուրիւրական, վերջին աղօթք մըն ալ միմնջելու խորհրդաւոր քարայրին առջեւ, ուր տակաւին վառ է Հայոց մոմը ուխտական:

Երեկոյեան դէմ, հարիւրաւոր ուրիշ ուխտաւորներու հետ թողուցինք Լուրտը, Մարտիրոսի վրայէն՝ դառնալու համար դէպի Վանատիկ:

Աճապարանքով եղաւ մեր մեկնումը, ինչպէս առհասարակ ամէն ուխտաւորի, որ կը մեկնի՝ իր տեղը նորահաս հաւատացեալի մը ձգելով:

Բայց Լուրտի յիշատակը կ'ապրի մեր մէջ անջնջելի:

ՌԻԽՏԱՒՈՐ

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ե Ա Մ Ի Ս Յ Ա Յ Ա Ն Ե Ն Ք

ԱճէՄԵԱՆ ՀԱՅԿ. — Մեսրոպ Թադիսեան: Յուլարձան մահուան հարիւրամեակին առթիւ: Թեհրան, տպ. Անի, 1958, էջ 36:

ԱՅԱՆԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ. — Կարապի երգեր: Պէյրուս, տպ. Մշակ, էջ 95:

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ. — Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը: Պէյրուս, տպ. Մշակ, էջ 459:

ԳՐԻԳՈՐԵԱՆ ՄԵՍՐՈՊ ՎՐԳ. — Վազգէն Վեհափառը: Պէյրուս, տպ. Սեւան, 1958, էջ 32:

ԵՐԵՄԵԱՆ ԱՐԱՄ. — Յակոբ Գուլամեան եւ իր զբոսականութիւնը: Պոսթըմ, տպ. «Պայքար», 1958, էջ 77:

ԹԵՐԶԵԱՆ ՄԵՍՐՈՊ ՎՐԳ. — Խոստովանողի մը նամականի: Պէյրուս, տպ. Լա Ֆորտի Փրէս, 1958, էջ 86:

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. — Չորս պաշտօնի բնագրեր. Գանձ չափեան, Փարոսի Պերոպ, Խոսրով Կուստան, Մատիկան ճառարակի: Վիեննա, տպ. Մըլխարարեան, 1957, էջ 135: (Ազգ. Մտնդ. ձգի):

ՄԵՐ ԳԻՒՂԸ ԳԱՏԵՄ (Հին եւ նոր ժամանակներուն). հրատարակութիւն Գառնի Լուսարբուն. Ուսումնասիրաց Ընկերութեան. խմբաւորութեամբ եւ յոսանքարանով Գ. Միլիարեան: Պոսթըմ, տպ. «Պայքար», 1958, էջ 115:

ՄՕԶԵԱՆ ԼԵՒՈՆ. — Արարականի մը Ողիսականը

(Սեւ օրերու յիշատակներ): Պոսթըմ, տպ. «Պայքար», 1958, էջ 115:

ՆԱՃԱՐԵԱՆ ՄԻՀՐԱՆ. — Պերլին եւ պատերազմը (Ողբերգութիւն՝ երեք արարով եւ երկու կենդանի պատկերներով): Պէյրուս, 1958, էջ 36:

ՈՐԲՈՒՆԻ Զ. Մ. — Անճրեւոս օրեր (Պատմութեամբ): Փարիզ, հրատ. «Ամսօրեակ», 1958, էջ 196:

ՊԱՊԱՅԵԱՆ ԳԱՌԻԿ. — Խոհեր ու զէմքեր: Նիւ Եորք, տպ. Լէյլէկեան, 1958, էջ 94:

ՊԱՊԱՅԵԱՆ Յ. Գ. — Հայ Աւարտ: (Գումարիպ շէնդ հրատարակութիւն, մեծադիր, բազմաթիւ նկարներով եւ քարտեաներով, կայքէն եւ անգլիերէն. գլխի է 30 տպար): Լոս Անջելէս, տպ. Մասիս, 1958, էջ 330:

ՄԻՆԱՍ ՆՈՒՐԻ. — Արեւորդի. — Փունջ մը հին եւ նոր բանաստեղծութիւններէ: Նիւ Եորք, տպ. Լէյլէկեան, 1958, էջ 182:

ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆ Ե. (Վեհաճ). — Մօր վիշտը (Դրամա՝ երեք դործողութեամբ): Թեհրան, տպ. Մասիս, 1958, էջ 57:

ՏԷՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ ՄԱՐԿՈՍ. — Յուլար ու խոհեր: Ֆրէզնոյ (Ֆալիֆ.), 1958, էջ 211:

ՏԷՏԵԱՆ ԽԱԶԻԿ Բ. — Ընթաց հայ եկեղեցական երաժշտութեան: Գրքեր երկրորդ: Վիեննայի, Ս. Ղազար, 1958, էջ 271:

SUALEHANE BULGARIYAN		PRIX DE L'ABONNEMENT ANNUEL	
Խոստով համար.	3000 Լիր	Pour l'Italie.	3000 Lires
Արտասահմանի համար	6 Տղար	Pour l'Etranger.	6 Dollars
Կէկ թիւը՝ 250 լիր	0,50 Տղար	Le Numéro: 250 Lires	0,50 Dollars

Direzione - Amministrazione - Pubblicità - Abbonamenti — Isola San Lazzaro - Venezia (Italia) - Tel. 60-104
 Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia.
 Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia

